ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն Ազգանուն**

   Անահիտ Ավանեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ առողջապահության նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, ս.թ. դեկտեմբերի 16-18

4. **Հրավիրող կողմը**

   ՌԴ առողջապահության նախարարություն

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցություն Ռուս-հայկական 6-րդ առողջապահական ֆորումին

6. **Քննարկված թեմաները**

   Քննարկվել են երկկողմ գործակցության առաջընթացի ապահովմանն ուղղված, այդ թվում՝ COVID-19 համավարակի, բժշկական կրթության և օնկոլոգիայի ոլորտներին վերաբերող հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   Ֆորումի շրջանակներում հանդիպում եմ ունեցել ՌԴ առողջապահության նախարար Միխայիլ Մուրաշկոյի հետ՝ առկա համագործակցության ընթացքը քննարկելու և փոխգործակցության նոր ուղիներ նախանշելու նպատակով:

   Հայկական պատվիրակությունը շրջայց է ունեցել «Բլոխինի անվան ուռուցքաբանության կենտրոնում»:

   Այցի շրջանակներում հանդիպել եմ նաև ռուսաստանաբնակ հայազգի անվանի բուժաշխատողների, առողջապահության ոլորտի գործիչների հետ, որի

ընթացքում ռուսաստանաբնակ հայ բժշկական հասարակությանն եմ ներկայացրել ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով ուղենշված առողջապահությանը վերաբերող առաջնահերթությունները:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ռուս-հայկական համաժողովի ընթացքում համագործակցության երկու հուշագիր է ստորագրվել՝ ՌԴ Ն. Բլոխինի անվան ուռուցքաբանության գիտահետազոտական կենտրոնի և ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի», ինչպես նաև Բլոխինի անվան ուռուցքաբանության գիտահետազոտական կենտրոնի և ԱՆ «Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի» միջև:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ստեղծել համատեղ աշխատանքային խմբեր՝ սիրտ-անոթային, ուռուցքաբանության և մանկաբարձության և գինեկոլոգիայի ոլորտներում ծրագրեր մշակելու ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

20 դեկտեմբերի, 2021 թ.

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157